



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.71

11-23

91.71-2

Ի. ՄԱՅՈՐՈՎ

30 SEP 2006

19 NOV 2010

Մ-23

27

ԹԱԼԻՍՄԱՆ

ՊԻԵՍ 3 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

Փոխադրություն
ԱՐԾ. Տ.-ՀՈՎՆԱՆՑԱՆԻ

382



91.71-2

Ի. ՄԱՅՈՐՈՎ

30 SEP 2006

19 NOV 2010

Մ-23

սյ

ԹԱԼԻՍՄԱՆ

ՊԻԵՍ 3 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

Փոխադրություն

ԱՐՇ. Տ.-ՀՈՎՆԱՆՅԱՆԻ

382



24 JUN 2013

8009 932 06

12067

Պետերատի տղաբաժնի

Գրառ. № 6380 (բ)

Հրատ. № 1612

Պատ. № 2183

Տիր. 4.000



13849-57

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ն Ր

1. ՈՀԱՆ-ԲԻՉԱ, գլուղի կոոպերատիվի գեղերապահը: Հաշմանդամ. աջ վոտքը փայտից է:
2. ՇՈՂԵՐ-ԲԱՋԻ, նրա կինը:
3. ՄԱՐԹ, նրանց աղջիկը: Գեղեցիկ աղջիկ:
4. ՄԱՆԱՍ, կոմերիտական: Կոոպերատիվի գործակալաւորը: Թեթեւ կակաղում է:
5. ԼԱԼԱՉԱՐ, գեղեցիկ լերիտասարդ: Հարուստի տղա:
6. ՊԻԱՆ ՍԱԲՈ, հարբեցող: Միջահասակ գլուղացի:
7. ԲՈՒԼԻԿ, չքավոր գլուղացի: Շաւլարի մի տուտը յերկար է, մյուսը կարճ: Վոտաբորիկ է:
8. ՍԱՆԱՄ-ԽԱԹՈՒՆ, Լալաղարի մայրը: Չոր-չոր կին, հարուստ հագնւած:

Գործողութիւնը կատարւում է գլուղում, ամառ ժամանակ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Ամառային յերեկո յե: Դյուղական փողոց կոոպերատիվ խանութի առաջ: Կոոպերատիվի արտաքին տախտակային դռները բաց են, իսկ ներքին տախտակային դռները՝ փակ: Լուսամուտի տախտակային փեղկերը նույնպես բաց են: Խանութի դռան վերել կախված է ցուցանակ—«Միություն» սպառկոոպ—մակագրությամբ:

Տ Ե Մ Ի Լ 1

ՄԱՐՈՆ՝ ձեռքին շիշ՝ ռապակեցնում է փողոցով դեպի կոոպերատիվի կողմը: Բեմի յեկեղից ձայն են տալիս.—«Մարո, Մարո», ՄԱՐՈՆ յես է նայում: ԼԱԼԱՉԱՐԻ ձայնը բեմի յեկեղից.—«Մարո, Մարո»: ՄԱՐՈՆ կանգ է առնում սպասողական, դառնալով ձայնի կողմը:

Տ Ե Մ Ի Լ 2

ԼԱԼԱՉԱՐ.—(Շատախաբախ է) Ո՛ւր ես գնում:

ՄԱՐՈՆ.—(Յույց տալով շիշը) Նալթի:

ԼԱԼԱՉԱՐ.—Բան եմ տեսնում:

ՄԱՐՈՆ.—Առա:

ԼԱԼԱՉԱՐ.—(Զեղքը քափահաբերելով) Հորս հետ անհամուխյուն պատահեց: Խիստ կպանք:

ՄԱՐՈՆ.—Ի՞նչ պատճառով:

ԼԱԼԱՉԱՐ.—Գնա գործիդ, հետո կպատմեմ:

ՄԱՐՈՆ.—Զեղք կգամ... (Շատախաբախով մտնում է կոոպերատիվ):

Տ Ե Մ Ի Լ 3

ԼԱԼԱՉԱՐ.—(Միտում է) Իմ կյանքն էլ կյանք է: (Վառած լուցկին քափելով դեն է նետում) Կարգի եսպես որ: (Հուզված բայլում է կոոպերատիվի առաջ):

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Բեժով ե) Պարոն Լալազարին խորհին հարգանքներս: Մերը՝ ձեզ (զլուխ ե տալիս), ձերը՝ (ծամածուրջուն անելով) մեզ: Մի հինգ չեբվոն վոր դեսը անեք, ըսկի ֆաս չի տա:

ԼԱԼԱԶԱՐ.—(Զարմացած) Սաքո, վորտեղից լուս ընկար: Հերս ասում եր,—նստած ես:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Մասը շուրքերին մոտեցնելով) Սըս-ա, Բերթի մասին մարդու բան չասես: Մենակ դու յես իմանում: Գեղացոց համար յես կնկաս տեսության եմ եկել:

ԼԱԼԱԶԱՐ.—Վաղճեց ա բաց են թողել:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Հինգ ամիս ա ազատություն եմ վայելում: Մեկել որվանից բստեղ եմ: Եկել եմ կուրորտ: Շատ եմ սիրում գեղի ամառվա ողջ:

ԼԱԼԱԶԱՐ.—Իսկ առաջ վորտեղ եյիր թրե գալիս:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Բաղաքում միլիցի հետ քյալա-քյալի եյի տալիս: Միլիցին բոլորովին հավան չեմ: Շատ անկարգ բաներ եմ տեսնում: Դրա համար ել միլիցեն ինձ չի սիրում: Բնավորություններս իրար համապատասխան չի գալիս:

ԼԱԼԱԶԱՐ.—Ի՞նչ պատճառով եյիր նստել:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Հորդ որհնանքով փթում եյի երկու ստատոյով:

ԼԱԼԱԶԱՐ.—Ղալաթը ինքդ տրել ես, ուրբիլ վրա յես գցում:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Ներողություն, ուգալովնի առաջին դասը հերդ ա ինձ սովորացրել:

ԼԱԼԱԶԱՐ.—Բերթեբումն ես սովորել լեզվիդ զոռ տալը:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Քյասիբությունն ու բերթը ախպեր աղա լեն: Հըմի ամեն մի ճշմարիտ մարդ բերթ ա նստում: Հերդ վճնց ա:

ԼԱԼԱԶԱՐ.—Նրան ի՞նչ կա վոր:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Կարտեղ եմ հորդ: Ուզում եմ տեսնեմ կարելի՞ յա:

ԼԱԼԱԶԱՐ.—Իրան հարցրու:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Առաջվա նման ելի առուտուր ա անում:

ԼԱԼԱԶԱՐ.—(Անհամբեր) Գիտես ի՞նչ կասեմ. ավելի լավ ա քու բանին գնաս:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Զգվանքդ գալիս ա ինձ հետ խոսալուց: Ուրեմն յես հըմի քեզ հըմար անհարմար կապանիս չեմ: (Հառաչանով յեկ ծամածուրքյալը) Ե՛գպես ել կիմանանք: (Գրվ-

ծիծաղով) Բայց հնպիսի մի ժամանակ կար, վոր յես, Լալազարի յա ասել, հորդ տան առաջին դռնադն եյի: (Յույց տալով կողպեռասիլի ցուցանակը) Են ժամանակ, յերբ յես ես կողպեռատիվի պրիկաշիկն եյի ե բոլոր գործերը իմ ձեռքով եր շուռ գալիս: Հորդ վոր մանուֆակտուրա յեր հարկավոր գալիս, ձեռաց վաղ եր տալիս ինձ մոտ.—Մի բան արա, Սաքո ախպեր, նեղ որիս հասի, կողպեռատիվի չթերից մի քանի թոփ հասցրու: Յես ել խաթրը չեյի կոտրում, նեղությանը հասնում եյի: (Արմունկով բոբում ե Լալազարի կողքը, աչքով անելով) Միտդ ա հերու:

ԼԱԼԱԶԱՐ.—Հերիք լեզվիդ տաս:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Սուս եմ անում: (Ափով փակում ե բեռանը) Ով առցածը միտ բերի, աչքը դուրս գա: Պապիրոս չունեմ:

ԼԱԼԱԶԱՐ.—(Տալիս ե տալիս) Առ ու ուղ ըլի:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Ծխում ե) Խանգարում եմ, հա: (Բոբում ե Լալազարի կողքը) Յես իմանում եմ ում ճամբին ես պահում: (Ծրխում ե յեկ ծուխը բաց բողնում) Լավ աղջիկ ա: (Լեզվով ծպպացնում ե): Շաքար (Բամիծաղով) Վոր յես ըտենց մեկը ունենայի...

ԼԱԼԱԶԱՐ.—Ձեռը քաշի, ասում եմ, ի՞նչ ես ճանճի պես կպել:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Մի թքի աղբրի մեջ, աղա Լալազար, Պիան Սաքոն (խփում ե իր կրծքին) հարկավոր մարդ ա: Մի ժամանակ քու հայրիկը...

ԼԱԼԱԶԱՐ.—(Ընդհատում ե) Դե հորս հետ ել գնա պոռոտի արա, յես ի՞նչ գործ ունեմ: (Գնում ե):

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Գնում ե նրա յեսելից) Աղա Լալազար, ներողություն, եսոր են ի՞նչ զալմաղալ եր ձեր տանը: Անց եմ կենում, տեսնեմ դու ոթախից դուրս ես վազում դրպա դարվազեն. քու յետևից ել հերդ՝ դամշին ձեռին: Ընչի յես ծնողիդ բարկացնում, հը:

ԼԱԼԱԶԱՐ.—Ձեռը պլաթի քաշես, թե չե՛:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Համաձայն եմ: (Պարզում ե ափը) Մի աբասի տալիս ես: Արաղի փողը պակաս ա: Պնդություն մի արա: Յես սաղ կողպեռատիվ եմ ծախել հորդ արաղով: Մեծ հարստություն եք դիզել իմ միջոցով...

ԼԱԼԱԶԱՐ.—(Սպառնալի) Ձենդ կտրելիս յես, թե (բռնեցր մոտեցնում ե Պիան Սաքոյի դեմքին) ուզում ես սրանով բերանդ փակեմ:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Ձեռքերը քափահաւում եւ, կեղծ վախով) Սուս եմ
անում, սուս եմ անում: Մարդու բան չեմ ասի: Հարստացե՞ք
իմ աշխատանքով, ինչքան ուզում եք: Վոչ մի մարդու
հայտնի չի, թե Պիան Սաքոն ձեզ համար ինչքան զոդու-
թյուն աւարել:

ԼԱԼԱԶԱՐ.—Ի՞նչ կեղտոտ բերան ունես, տո... (Տալիս եւ դրամ)
Առ, խեղդվի:

Կոռպերասիվից դուրս եմ գալիս ՄԱՐՈՆ՝ ծիծաղելով, նրա յետվից՝
ՄԱՆԱՍԸ:

Տ Ե Ս Ի Լ 5

ՄԱՆԱՍ.—(Մարոյին, բաց չբողբելով դռան բռնակը) Որինակա՞ն
ասած, լավ նկար են ուղարկել: Կգտնա՞մ տակ տալու:

ՄԱՐՈ.—Կարող ա գամ:

ՄԱՆԱՍԸ հայացք նետելով ԼԱԼԱԶԱՐԻ յետ ՊԻԱՆ ՍԱՔՈՅԻ կողմը,
մտնում ե խանութ, ծածկելով դուռը: ՄԱՐՈՆ գալիս ե դեպի ԼԱ-
ԼԱԶԱՐԸ:

Տ Ե Ս Ի Լ 6

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Կամացուկ, Լալազարին) Ուշադրութիւն դարձ-
բու, աղա Լալազար, իմ հաջորդը քու բարիշնին աչք ա
դրել: (Հանում ե գլխակը) Ցանկանում եմ քաղցր սեք
անեք:

ՊԻԱՆ ՍԱՔՈՆ կոտրեցվելով գնում ե յետ քաղցնում անկյունում,
փոքրիկից շուտով հանում ե գլուխը, գաղտնագողի նետելով ՄԱՐՈՆ-
ՅԻՆ ու ԼԱԼԱԶԱՐԻՆ:

Տ Ե Ս Ի Լ 7

ԼԱԼԱԶԱՐ.—(Խանդոս) Մանասը ո՞ւր եր կանչում քեզ:

ՄԱՐՈ.—Նոր կինո նկար են ուղարկել: Եզուց ցույց են տալու:

ԼԱԼԱԶԱՐ.—(Խանդոս) Հասկանում ենք ձեր նկարները: (Անբա-
վական) Կոռպերասիվում ի՞նչ ելիք անում եք: Ժամա-
նակ Մանասի հետ սիւն-բիւլի ելիք անում:

ՄԱՐՈ.—Մի բարկացի, Լալազար: (Սիրալիք) Ի՞նչ ելիք ասում:

ԼԱԼԱԶԱՐ.—(Մոռալ) Հերս ուզում ա ինձ պակել: Սարափանդի
Մարգարենց Անուշին ա ուզում: (Յույց տալով կոռպերասիվը)
Կոռպերասիվը կտրել ա առուտուրը: Ուզում ա Անուշի
բաժինքով գործերը կարգի գցի: (Պիան Սաքոն ուժադի-

լում ե, գլուխը անկյունից հանած): Նրա գործերը թաք-
վել են, մեջտեղը յես պըտի նահատակվի:

ՄԱՐՈ.—Ուզում ա պակել: Բա դ՞ու:

ԼԱԼԱԶԱՐ.—(Ուտերը բորվելով) Ձեմ իմանում ինչ անեմ... Հորս
հետ գլուխ դնել դժվար ա. իր ասածի մարդ ա:

ՄԱՐՈ.—(Շուռ ե գալիս, աչքերը մաքրելով) Յերդում ելիք առնում,
վոր մենակ ինձ ես սիրում: Ինչո՞ւ ելիք խաբում, թե վոր
պըտի Անուշի հետ պակելիք: (Հեծկոտնում ե):

ԼԱԼԱԶԱՐ.—Դե հեքի՞ք վայնասուն անես. առանց են ել սիրտս
պատուվում ա: Այ, թե Անուշը ինչքան սիրելի յա ինձ
(քում ե):

ՄԱՐՈ.—Դր՞ուտ: Ձե՞ս սիրում:

ԼԱԼԱԶԱՐ.—Բա դու ի՞նչ ելիք կարծում: (Բռուցքը քափ տալով)
Տեսնել չեմ ուզում: Սիրտս խառնում ա:

ՄԱՐՈ.—Ել ընչի՞ լես դարդ անում: Հորդ եղպես ել ասա: Ասա,
վոր նրան չես սիրում:

ԼԱԼԱԶԱՐ.—Բա վոր հերս անիծի, տանից դուրս անի: Ինչո՞վ
ապրենք:

ՄԱՐՈ.—Սոված չենք մնա: Աշխատանք կանենք:

ԼԱԼԱԶԱՐ.—Աշխատանքի սովորած չեմ: Պատիկուց առուտուրի չեմ
վարժվել: Ամեն որ գաթա-հալվա յա ելե կերածս, բայց կա-
րող ա չոր հաց ել չգտնվի:

ՄԱՐՈ.—(Վաճառած) Թե վոր եղպես ա... պակելի Անուշի հետ.
թե վոր գաթան-հալվան քեզ թանգ ա գալիս ինձանից...
(Գնում ե կոռպերասիվի պատշգամբի մոտով, արտասովելով):

ԼԱԼԱԶԱՐ.—(Գնում ե նրա յետվից) Մարո, լաց մի լինի, կտես-
նեն...

ՄԱՐՈ.—Ինչո՞ւ ելիք խաբում ինձ:

Տ Ե Ս Ի Լ 8

ՄԱՆԱՍ.—(Շատ բաց ե անում խանութի դուռը) Մարո, քեզ ո՞վ
բան ասեց: Ինչո՞ւ, որինական ասած, լաց ես լինում: (Շա-
պում ե նրա մոտ: Պիան Սաքոն դուրս ե գալիս քաղցնոցից,
դիտելով տեսարանը):

ԼԱԼԱԶԱՐ.—Մարո, գնանք:

ՄԱՆԱՍ.—Որինական ասած, ի՞նչ իրավունքով ես որիորդին վի-
րափորում:

ԼԱԼԱԶԱՐ.—(Հրում ե նրան) Ուրիշ գործերի մեջ մի խառնվի:

Գնա կողպեքառախփում քու առուտուրն արա: (Մառոյին)
Սուս արա: (Ուզում ե բռնել նրա ձեռքը, բայց նա դուռն է
պրծնում: Բռնում ե արմուկը) Բա՛վական ե, ասում եմ: Գնա
տուն:

ՄԱՆԱՍ.—(Փակելով Լալազարի առաջը) Ձեռքերդ քեզ պահի,
քաղաքացի: Որինական ասած, յես բողոքում եմ:

ԼԱԼԱԶԱՐ.—(Նրան կոպիտ) Իսկ յես թքել եմ քեզ վրա: Մտիկ
չեմ տա, վոր կուսակցական ես:

ԼԱԼԱԶԱՐԸ հրում ե ՄԱՆԱՍԻՆ: ՄԱՐՈՆ փախչում ե: ՊԻԱՆ ՍԱՔՈՆ
շտապ մոտենում ե:

Տ Ե Ս Ի Լ 9

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Ի՞նչ զարմազալ ա, տղերք: Անց եմ կենում, տես-
նեմ կռիվ ա: (Մանասին, ցույց տալով Լալազարին) Ինչո՞ւ
յես խփում ընկեր Լալազարին: Լավ չի, ընկեր Մանաս:
Կուսակցական ես, բայց անհարգություն ես անում: Եդ
տեսակ արարքի համար կարելի յա կաղեթում գրել:

ՄԱՆԱՍ.—Վո՛չ մի կռիվ չկա:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Ձեռ կարա խաբի: Յես իմ աչքով տեսա, ինչպես
խփեցիր Լալազարին: (Լալազարին) Ընկ. Լալազար, ի-
մացիր, վոր յես կարող եմ վկայություն տալ: Յերդամով
կհաստատեմ: (Ձայնույթով) Սա ի՞նչ խաչատուրություն ա.
անկուսակցական մարդուն չեն թողնում ապրի:

ՄԱՆԱՍ.—Փչի, բայց չափը անց մի կաց: Որինական ասած,
ստախոսության համար պատասխան կտաս: Դի՛չ են խրա-
տել:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Լալազարին) Ուղղակի չեն թողնում մարդ շունչ
քաշի, ընկեր Լալազար: (Ցույց տալով Մանասին) Հերիք չի,
վոր քեզ խփում ա, ինձ ել (ձեռքը խփում ե իր կրծքին)
ստախոս ա դուրս բերում, վորովհետեւ լես վկա յեմ: Ընկեր
Լալազար, վկա յեղիր ես բանին: Հարկավոր ա վերջապես
ճշմարտությունը հայտնի անել, թե չե:

ՄԱՆԱՍ.—Ճշմարտությունը ինքն իրեն հայտնի կանի: Մարոն
չի ուրանա, վոր լաց եր լինում: Կպարզաբանենք, թե ով
մե՛կ ե խփել: (Մտնում ե խանութ):

Տ Ե Ս Ի Լ 10

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Նայելով նրա յետվից) Վե-Կա-Պե... Իշխանու-
թյան անբ են դառել քոսոտ շները: (Լալազարին) Ձեռք

տեղը մի լավ դորս դու պատվիրեցիր չաբի: Յես քեզ
կողմնակի: (Կարեկից) Պի՛նդ խփեց:

ԼԱԼԱԶԱՐ.—(Մռայլ) Սաքո, դու եղբան ել... դուր տեղը մի
չարախոսի... Մանասը ինձ ձեռք չի տվել:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Շը22... Եդ մասին վո՛չ մի խոսք... Սուս արա,
աղա Լալազար: Ինձ ականջ արա: Մատով չի կպել, բայց
դու բողոքին ասա, վոր Մանասը ուղեց ձեռի: Մի քի
պետք կգա:

ԼԱԼԱԶԱՐ.—Ինչի՞ պետք կգա:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Յես նրանց գործերը շատ լավ եմ իմանում: Ձեռք
տեղը չի, վոր Գե-Պե-Ու ել եմ նստել, բերթ ել: (Լալազա-
րի ականջին) Նրանք ձեր ընտանիքի տակը փորում են:
Հիմի ձեզ ամեն մի թելի կտորն ել պետք կգա: Մի բան
վոր ընի, համարձակ հայտարարի, թե Մանասն ուզում եր
ինձ սպանի, Պիան Սաքոն չիողաց:

ԼԱԼԱԶԱՐ.—Ի՞նչ փորել, ինչե՞ր ես ասում:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Նշանակալից) Յես իմ հաշիվների մեջ չեմ տեղա-
վում: (Ցույց ե տալիս ձեռքի ավր) Սաղ գեղը իմ ես ափի
մեջ ա: Դու մտիկ մի տուր, վոր յես երեկ-մեկել ոքն եմ
եկել: Յես ըստեղի բոլոր գործերը անգիր եմ իմանում: Ու-
ղիմ ես իմանաս ճշմարիտ եմ ասում, թե չե:

ԼԱԼԱԶԱՐ.—Ասենք թե:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Վերցնենք որինակի համար քու հայրիկին: Առա-
ջինը—(ծալում ե մեկ մասը) ձեր առուտուրը ձեռ ու վոտը
հավաքում ա ես (ցույց տալով կողպեքառախփը) հոգեհոտի պա-
ճառով: Վնասից բացի բան չկա: Ուղի՛ր ա:

ԼԱԼԱԶԱՐ.—Դու վերցնողից գիտես:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Պարծենկոտ) Պիան Սաքոն ամեն բան գիտի: Հե-
տո, յերկրորդ—(ծալում ե յերկրորդ մասը) քու հայրիկը
մտադրություն ունի ձեր ֆիրմը ուրիշի կապիտալով կեն-
դանացնի, վորովհետեւ սեփականը չունի: Ես նպատակով
(խորամանկ ծիծաղում ե) իր միևուճար զավակի համար
հարս ա շոկել Սարավանդ գեղի հայտնի Մարգարենց Անու-
շին, վորը...

ԼԱԼԱԶԱՐ.—(Չարմացած ընդհատում ե) Դե՛կ մի ասաց:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Մամառվելով) Պիան Սաքոն լսում ա, թե վոնց
ա ծիլը հողի միջից դուրս գալիս: Աշխարհումս հլա չի ծըն-
վել ընենց ժուլիկ, վոր կարենա Պիան Սաքոյին խաբի:

Յերբորդ (ծալում է յերբորդ մասը),—էս (ցույց է ցալիս կօ-
պպերասիվը) հողավորները, ահա հենց եղ Մանասի դրդոն-
լով, ուղում են ձեր տունը հիմնադրակ քանդի: Վնասա-
կար մարդիկ են եղ կոոպերատիվի մարդիկ: Նրանք իմ
(ցույց է ցալիս կոկորդը) ըստեղս են նստել: Ինձ պաշտոնից
հանեցին,—հանեցին, քնաս չունի, բա ել կայքս մեր են (մասով
պպառնում է կոոպերատիվին) դատարանով գրավում: Միթե
լես հավատարիմ չեմ ծառայել նրանց: (Խիում է Լալազարի
ուսից) Հավատա ինձ, վոր նրանք ձեզ ել կկործանեն, մու-
րացկան կդարձնեն:

ԼԱԼԱԶԱՐ.—Հնարում ես:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Նրանք բոլորին կկործանեն, աղա Լալազար,
բոլորին, ով քիչ թե շատ զապաս ունի: Եսոր ինձ, ե-
զուց քեզ, մեկել որն ել մի ուրիշին: Ապահով քնա. նրանք
հայրիկիդ սնդուկներին ել կհասնեն: (Լուրջունից հետո)
Բայց լես նրանց դեմ ճշմարիտ ռեցեպտ ունեմ: (Մխախտս է
փաթարում):

ԼԱԼԱԶԱՐ.—Ի՞նչ ռեցեպտ:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Միջոց:

ԼԱԼԱԶԱՐ.—Ի՞նչ միջոց:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Եսպիսի միջոց, վոր... (գլուխը բափանառում է
յեվ մասնեով չոքացում: Լուում է):

ԼԱԼԱԶԱՐ.—Ասում ես, ելի:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Մտախոհ) Ասենք թե պսակվեցիր Անուշի հետ...
Մեկ է, ձեք ֆիրմը քարուքանդ ա լինելու: Կոոպերատիվը
ուժեղ ա... Բայց վոր Մարոյի հետ պսակվես... (Դանդաղ
ծխում է) Լավ աղջիկ ա, գեղի առաջին սիրունն ա... (Լուց-
կին հանգչում է. նորն է վառում) Սպիչկեն ել ա վառա-
ցել... չի վառվում... (Վառում է յերբորդ լուցկին):

ԼԱԼԱԶԱՐ.—(Անհամբեր) Ի՞նչ միջոց գիտես, ասա:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Աբրահամի և Իսահակի պատմութունը իմա-
նում ես:

ԼԱԼԱԶԱՐ.—(Բացառական շարժում է գլուխը) Չեմ լսել:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Աբրահամը հերն ա, Իսահակը տղեն: Աբրահամը
ուղում ա իրա Իսահակ տղին զոհի աստծուն, զանակով
վիզը կարի, ինչ ա՛ իրա խոսքը կատարած ըլի: (Մասը վեր
ցցելով) Հրմի քու բանն ա: Աբրահամը քու հերն ա, զու-
յե՛լ Իսահակը: Բայց զու մի հպատակվի: Ընչի՞ պատի ջանել
կյանքդ փչացնես: Հակառակի:

ԼԱԼԱԶԱՐ.—Ի՞նչպես հակառակեմ:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Անորոշ) Հնար կգտնվի:

ԼԱԼԱԶԱՐ.—Ի՞նչ հնար:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Լուցկի վառելով) Չորբորդ սպիչկեն ա փչանում:
(Լուցկին դանդաղ փում է սուփին) Քեզ կպսակեն Անուշի
հետ, իսկ Մարոյի հետ կպսակվի... (Սկսում է զանգաղորեմ
նոր լուցկի վառել):

ԼԱԼԱԶԱՐ.—(Խիում է նրա ձեռքից լուցկու սուփը յեվ դեն նետում)
Ի՞նչ ես աղիքներս կտոր-կտոր անում:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Չարմանով նայում ն նրան): Ի՞նչ ես անկարգ
բաներ անում: Սպիչկին փող ա տված: (Բարձրացնում է
լուցկու սուփը) Գործադուրկ մարդ եմ, ինձ համար ամեն մի
կոպեկ նշանակութուն ունի, հաշված ա:

ԼԱԼԱԶԱՐ.—(Ցնցում է Պիան Սաֆայի ուսը) Մարոյի հետ մի կը-
պսակվի:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Հեռացնելով նրա ձեռքը) Հուժ մի տուր, ցավում
ա: (Քմբիծաղով) Դու քու Անուշի հետ մի բարձի կքենք,
իսկ քո Մարոյի հետ (ծիծաղում է այժի նման զզվելի) կպար-
զի... (Միծաղում է խեղդվելով):

ԼԱԼԱԶԱՐ.—(Մոնչում է) Ո՞վ:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Մանասը, հի:

ԼԱԼԱԶԱՐ.—Մանասը (Բարձրացնում է բռնցքները) Մանասը,
ասում ես:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Իհարկե: Մանասը կպսակվի Մարոյի հետ: Կու-
սակցականներն ել սիրուն կեկա սեր ունեն: Չէս տեսնում
Մանասը վոնց ա Մարոյի լետեից ընկել: Վոնց վոր արջը՝
մեղրահացի, իմ խոսքը լավ հիշիր. Մանասը քեա ել, Մա-
րոյին ել իրա մատին կփաթաթի: (Քմբիծաղ) Մտիկ մի տուր,
վոր աղջիկը հրմի քեզ հրմար արտասուք ա թափում: Կեկա
արտասուքը,—վոնց վոր ջուր:

ԼԱԼԱԶԱՐ.—Ռեցեպտի մասին ի՞նչ էլիր ասում:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Թե վոր խելքով գործ բռնես, կարելի չա հակա-
ռակ կողմը շուռ տալ: Ընչի՞ չա հերդ զոռ անում, վոր հա-
րուստ աղջկա հետ պսակվես: Վորովհետև կոոպերատիվը
նրա ձենձը հանում ա: (Մասներ բռնցք շինելով) Թե վոր
կարենաս կոոպերատիվին ընենց հուսի տաս, վոր նրա ձենձը
գուրս գա,—են ժամանակ ել վոչ Անուշ ա հարկավոր, վոչ
ել նրա բաժինքը: Պսակվի ում հետ ուղում ես: Հերդ չի հա-
կառակի:

ԼԱԼԱՉԱՐ.—Կոռպերատիվին վրէժն հուժի կտաս:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Բողազս չորացել ա, հարկավոր ա թրջել, բայց փող չկա... (Շուռ ե տալիս գրպանները) Սուտ եյի ասում, թե մի աբասի յա պակաս մենակ... Գնամ տենամ ո՞ւմ ուստ կգամ... (Ուզում ե գնալ):

ԼԱԼԱՉԱՐ.—Համբերի... (Փնտրում ե գրպաններում) Առ մի մանեթ: (Տալիս ե) Ի՞նչ ոնցեպտ ես խմանում:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Բժիշկը ոնցեպտի հըմար շատ մեծ շնորհակալության ա ստանըմ, համա դու ուզում ես մի մանեթի՞նով պըրծենա: (Դրամը ցույց ե տալիս ափում, ապա արագ բարձունով քաղցնում ե):

ԼԱԼԱՉԱՐ.—Լավության տակ չեմ մնա, մենակ թե բան դուրս գա:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Գնա ձեր տան մոտերքը սպասի ինձ: Գնամ մի քիչ բողազս կակղացնեմ, գամ:

ԼԱԼԱՉԱՐ.—(Գնալով) Չէս խաբի:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Բացի կոռպերատիվից, կյանքումս ուրիշ մարդ չեմ խաբել:

(ԼԱԼԱՉԱՐԸ գնում ե):

Տ Ե Ս Ի Լ 11

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Գնալով) Գնալով ե կոռպերատիվի ցուցանակին) Դե հըմի պինդ կաց, սավետական «Միություն»: Պիան Սաքոն քեզ ընենց որը քցի են պատճառով, վոր քու խաղիյինները նրա տունն են քանդել: (Ուզում ե գնալ, դեմ դուրս ե գալիս ԲՈՒԼԻԿԸ):

Տ Ե Ս Ի Լ 12

ԲՈՒԼԻԿ.—(Ձեռները տարածելով) Բա՛, եդ ո՞ւմ եմ տեսնում: Սա՛քո՛:

ՊԻԱՆ ՍԱՔՈՆ.—Դու յէս, Բորիկ:

ԲՈՒԼԻԿ.—Նա ինքն ա: (Ցույց տալով վոսները) Հըլա սապողի փող չեմ դղել:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Սավետական իշխանության որով բոլոր լավ մարդիկ վոտարորիկ են ման գալիս: Սապող հաղնում են կոմունիստները, մեկ ել (ցույց ե տալիս կոռպերատիվը) կոռպերատիվի մարդիկ:

ԲՈՒԼԻԿ.—Շատ ժամանակ ա եկել ես: Խե՛ր ըլի:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Հիվանդության պատճառով ոտպուսկ եմ եկել, եդ ո՞ւր ես վազում:

ԲՈՒԼԻԿ.—Կոռպերատիվ: Տերտերը դրկել ա մսի Ղոնաղներ են եկել:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Տերտերանց տանն ես գլուխդ պահում:

ԲՈՒԼԻԿ.—Յես—վոնց վոր ճեճող: Վոր տնից վոր կերակրաջուր են թափում, ընտեղ ել քուջուջ եմ աճում: Երեկ դուքանչու ձին լվացի, տասնհինգ կոպեկ տվեց, հացն ել հետը: Եսոր տերտերն ա կանչել դոմը դուրս տամ: Փոր ա, մի հնարքով պտի կշտացնենք:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Եդ մի ապրուստ չի, վոր դու չես աճում: Կաշիդ ու վոսկորներդ են մնացել: (Ցույց տալով սրունքները) Շալվարիդ տուտը վորտեղ ես մոռացել:

ԲՈՒԼԻԿ.—Տերտերի շուռն ա պոկել: Շատ կատաղած շուռն ա: Քիչ մնաց վոտս հետը տաներ:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Մապացնելով) Մարդու մեղք ա գալի վրեդ մտիկ տալուց: Քյասիբի իշխանությունն ել ելավ, ելի դու են Բոբլիկը մնացիր: Վոչ տուն ունես, վոչ ապրուստ, վոչ ձի, վոչ ել կով:

ԲՈՒԼԻԿ.—(Միծաղելով) Մի տուն ունեմ,—կտուրը ծակ:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Ես վոնց ա, վոր քյասիբի իշխանությունը քեզ չի ոգնում: (Ցույց ե տալիս կոռպերատիվը) Կոռպերատիվ կղիմեյի: Ել նրա ոգուտը ի՞նչ ա, վոր քեզ պես քյասիբին ել ոգնության չի հասնելու:

ԲՈՒԼԻԿ.—Ինձ նմանները շատ են: Կապիտալը հերիք չի աճի, վոր բոլորին ոգնի: Մենք ինքներս պտի մի տեսակով նեղությունից դուրս գանք: (Խորհրդավոր) Յես կոռպերատիվից ափիլի լավ միջոց եմ գտել:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Եդ ի՞նչ միջոց ա:

ԲՈՒԼԻԿ.—Կարող եմ ցույց տալ: (Արձակում ե կրճի կոնակներ յեվ ցույց ե տալիս վզից կախված յեռանկյունաձեղ կտրված կապի կտոր) Տես:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Եդ ի՞նչ բան ա: Կաշի՞ չա:

ԲՈՒԼԻԿ.—Թլլիսմ ա: Իրեք մանեթով տիրացվից եմ առել: Կախ տու վզիդդ, ասում ա, հաջողություն կունենաս, կհարստանաս, նեղությունից կազատվես: Ու դրուստ ել դուրս եկավ: Հենց վոր ես թլլիսմը կախեցի վզիցս, ամեն որ իրեք շահի, մի աբասի, մի աբասի, յա իրեք շահի հա գալիս ա: (Խնամով ուղղում ե քալիսմանն ու կոնկում կուրծք): Ես որը միանգամից երկու աբասի վեր կալա:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(Արհամարհական ծիծաղում ե, գլուխը ցատուբեռելով) Հէ, հէ... Շաբաթը ռիստը արասի,—մի մանեթ քառասուն: Ամիսը հինգ մանեթ վաթսուն: (Արհամարհական) Ի՞նչ փող ա:

ԲՈՐԼԻԿ.—Ձեզած տեղը եղ ել բան ա:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Այ, թե վոր մի անգամից հինգ հատ հարըրանոց դնես ջեբդ,—եղ ուրիշ բան ա: Գողաքում մուրացկանը ժամի դռանը դրանից շատ ա հավաքում:

ԲՈՐԼԻԿ.—Հինգ հարուրը ճամփին ցանած չի, Սաքո:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Մարդ վոր խելով ըլի, հազարը կգտնի:

ԲՈՐԼԻԿ.—Վճնց:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Հարկավոր ա ման գար: Ավետարանում ասած ա.—
Թափեք,—կբացվի, ման եկեք,—կգտնեք:

ԲՈՐԼԻԿ.—Հաղար մանեթ կարելի՞ յա մի անգամից գտնել: Եղպես բան մենակ երազում ա պատահում:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Գիտես, դրուստ ասած, տիրացուն քեզ չի խաբել: Ձուր չի, վոր դու պատահեցիր ինձ: Գու թըլումը մեծ գործընդուն ունի: Դրուստ վոր, կարող ես հարստանալ:

ԲՈՐԼԻԿ.—Դձե եղ բանում ինչ գործ ունես: Փող ես տալո՞ւ:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Տալը—չեմ տա, բայց կարող եմ ցույց տա փող աշխատելու ձևը: Իրեք հարուր մանեթ տուանց նեղուկ չան կաշխատես:

ԲՈՐԼԻԿ.—Իրե՞ք հարուր... Ի՞նչ ես ասում, յես հարուր մանեթի հըմար գլուխս կկտրեմ... Երեխեքիս հըմար մի կով կառնեմ:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Ուզո՞ւմ ես ոնցեպտ ասեմ:

ԲՈՐԼԻԿ.—Ասա: Վոտներդ կպահեմ, թե վոր չես խաբի:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Իրիկունը արի մեր տուն: Համ մի-մի ստաքան կքցենք, համ ել ծանր ու թեթև կանենք... Մենակ թե ես մասին մարդու բան չասես: Կգաս:

Տ Ե Ս Ի Լ 13

ՄԱՆԱՍԸ դուրս ե գալիս խանութից, ծածկում ե արտաքին ցախսակ-յա փեղկեր: ՊԻԱՆ ՍԱՔՈՆ շատ հեռացել ե:

ԲՈՐԼԻԿ.—(Հանկած հիշելով) Կոռպերատիվը վաճկում ա: (Վաճում ե դեպի Մանասը) Համբերի, Մանաս, ինձ մսիչին ղըր-կել: Տերտերի մոտ զոնաղ ա եկել:

ՄԱՆԱՍ.—(Փակելով կողպեք) Որինական ասած, լավ միս չկա: Շոգից ծանրացել ա: Եզուց նորը կլնի:

ԲՈՐԼԻԿ.—Վնաս չունի, թող ծանրացած ըլնի: Կերտերի գոնաղ-նեքը կուտեն:

ՄԱՆԱՍ.—Ուտելը—կուտեն, բայց յես, որինական ասած, իր-վունք չունեմ ծախելու: Կոռպերատիվ փչացած ապրանք չի ծախում: Ձի կարելի, վոր կոռպերատիվին հայտնի:

ԲՈՐԼԻԿ.—Խելով գլուխ, հասկացի: Ո՞ւմ համար եմ տանում: Տե-տերի: Իսկ տերտերը, մեկ ա, վոնց ուզում ես արա, միջ-եկ կոռպերատիվ խայտառակ ա անելու: Տուր, Մանաս:

ՄԱՆԱՍ.—Որինական ասած, վոչ մի կերպ չեմ կարող: (Փակում ե) Առտուրը փակում եմ մինչև վաղը:

ԲՈՐԼԻԿ.—Վոր եղպես ա, ուրեմն պըտի դուքանչու մոտ գնամ: (Գնում ե):

Տ Ե Ս Ի Լ 14

ՄԱՆԱՍԸ փակում ե խանութը: Գալիս ե ՈՀԱՆ ԲԻՉԵՆ, գինվորա-կան օխեկով, ուսին նրացան:

ՈՀԱՆ ԲԻՉԱ.—Կոռպերատիվը կողպեցիր, կարմիր կուպեց:

ՄԱՆԱՍ.—Այսոր բավական ե: Ինչո՞ւ յես շուտ դուրս յեկել, Ոհան բիձա:

ՈՀԱՆ ԲԻՉԱ.—Կնիկս տնից դուրս արավ: Կնանիքը հավաքվել են, ինչ վոր սեկրետնի կնիկ հարց են վորոշում: Ինձանից քաշվում են:

ՄԱՆԱՍ.—Մարոն ամեն ա:

ՈՀԱՆ ԲԻՉԱ.—Տանն ա: Նավթը լավը չի, Մանաս. ճըթըթում ա, կասես մեջը ջուր կա խառնած: (Նստում ե աստիճանների վրա):

ՄԱՆԱՍ.—Որինական ասած, շրջկոռպն ե մեղավոր: Դա յես ու-ղարկել:

ՈՀԱՆ ԲԻՉԱ.—Դրա համար հարկավոր ա նրանց պոչը հուլ տալ: Պայշիկը անբավական ա, ասեք:


ՄԱՆԱՍ.—Մարոն ուրախ արամադրության մեջ ա:

ՈՀԱՆ ԲԻՉԱ.—Լաց ըլնելու Բ՜նչ ունի: Երեխա չի: Եսոր շատ առու-տուր ես արել:

ՄԱՆԱՍ.—Ցերկու հարյուր յոթանասուն... Մարոն Բ՜նչ ա տնում:

ՈՀԱՆ ԲԻՉԱ.—Ի՞նչ ես կպել Մարոյի յախից... Թե շատ հետ-քըքեր ա, դեռ ինքդ տես: Ով ա իմանում հըմի կնանիքոնց հետ բամբասանք ա անում:

ՄԱՆԱՍ.—Վոչինչ... հենց եղպես... Ի միջի այլոց: (Լուելուց նե-սո) Առաջիկա գործակալը ինչի կարգադրել ե:



ՈՀԱՆ ԲԻԶԱ.—ՊիանՍաքոն: Տոսա: Հարբած պտուտ ա գալի,—բու-
թիլկեն ջերին: (Ձեռք քստահարելով) Երևում ա մարդը բոր-
րովին կորած ա, երես ա առել: Տեսեսությունը քցել ա
կնկա վրա, ինքը անդգամություն ա անում:

ՄԱՆԱՍ.—Ո՛րք եր կորիլ:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Սատանան ա խմանում: Ասում ա ծառայում ա ինչ
վոր մի տեղ, տնտեսական մասում: Թեսուտ չի տար, դրուստ
ա ուրեմն: (Գլխով շարժելով) Եթին բոստան են քցել: Վոր իմա-
նան մենք նրան կոտորատիվից վաճառել ենք, իրանք ել չեն
պահի:

ՄԱՆԱՍ.—(Ձգում է կապեփը, փորձելով ամուրքունը) Կողպեք
լավը չի: Որինտեղան ասած, հարկավոր է նորը առնել: Լավ
հսկիր, Ոհան բիձա, չերեք հազարի մանուֆակտուրա կա:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Աբխեյին ֆա, չեմ քնի: (Սկսում է չիբուխը լցնել:
Բոբիկը վերագտնում է):

Տ Ե Ս Ի Լ 15

Շատալ մեծում է ԲՈՒՂԻԿԸ:

ԲՈՒՂԻԿ.—(Մանաթին) Դուքանչին վոչ հինը սենի, վոչ Թագեն:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Ի՞նչ ես ուզում:

ԲՈՒՂԻԿ.—Մի: Շատ հարկավոր ա, բայց վոչ մի տեղ չկա:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Ցեթե շատ հարկավոր ա, դեռ մեր տուն, Շողեր
բաջուց ուղի: Մուսուտը տուել են, կեսը մնացել ա:

ԲՈՒՂԻԿ.—(Ուրախացած) Մեծ լավություն տրած կըլնես, Ոհան
բիձա: Տերտերի մոտ դոնադներ են եկել:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—(Մտք տալով) Տերտերի համար ես ուզում: (Ձեռք
առաջ պարզելով) Ցետ կառավարի: Տերտերին չեմ տա:

ԲՈՒՂԻԿ.—(Ազալանքով) Եղպես բան մի տրա, Ոհան բիձա: Տեր-
տերի փեսան կնկա հետ եկել են:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Չեմ տա:

ԲՈՒՂԻԿ.—Ընչի՞ յես խնայում, փող եմ տալիս:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Տերտերի փողը ինձ հարկավոր չի: Խեղահոտ ա
գալիս:

ԲՈՒՂԻԿ.—Ի՞նչ տեսակ մարդ ես: Ինձ հո տալիս ելիր: Մեկ չի
քեզ համար, թե միսը ո՞վ կուտի: Մախի ինձ, թե վոր տեր-
տերին չես տալիս:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Վար դու յեկ տերտերին առնես: Համաձայնող-

կան ես դու, Բոբիկ, համ մեզ, համ ձեզ: Դրա համար ել
եղ որն ես ընկել: Մի վտոով սավետական ֆունդա: Մենտի
վրա յես, մեկել վտոով ուրիշ կողմեր ես թռչկոտում: Ով շատ
տվեց, են վտոով ել են կողմն ես անց կենում:

ԲՈՒՂԻԿ.—Դեհ դու յեկ... (Շատալ հեռանում է):

Տ Ե Ս Ի Լ 16

ՄԱՆԱՍ.—Որինական ասած, յես ել պիտի գնամ, Ոհան բիձա:

Մարոն ի՞նչ ա... (Ընդհատում է հազարով յեկ գնում է):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—(Նրա յեսեվից ծածկելով) Մարոն լաց ա ըլում:

Մանասին ա կանչում. գնա տեսուր՝ յան, (Միամտն է ծխում):

Տ Ե Ս Ի Լ 17

Թեմի յեսեվ՝ յերգի ձայն: Գալիս է ՊԱՆ ՍԱՔՈՆ—գրպանում աղու
փե, գլխարկը ծոծրակին փառած: ՈՀԱՆ ԲԻԶԱՆ ծխամորնը ծխելով,
խմբադով հեսեվում է նրան:

ՊԱՆ ՍԱՔՈ.—Ընկեր Ոհան բիձային, ժողովրդական կալքի
պաշտպանին հարգանքներս: (Գլուխ է ալիս) Մերը՝ ձեզ,
ձերը՝ մեզ:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Ձերը մեզ պետք չի, մերը մեզ ա հարկավոր:

ՊԱՆ ՍԱՔՈ.—Ձերը չենք վերցնի, մերը մեզ հերիք ա: (Գրպա-
նում զննողաբար նայում է դրամներ):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Քե՞ք ես անում:

ՊԱՆ ՍԱՔՈ.—Մարմինս եմ կաղզուրում, Ոհան բիձա:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Ինչո՞վ ես հիվանդ, խեղճ մարդ:

ՊԱՆ ՍԱՔՈ.—Չխոտկա լա ընկել դոչա: (Հազում է):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Իսկ ըստեղդ չի՞ ցավում: (Ձեռնով խփում է իր
նստասեղին):

ՊԱՆ ՍԱՔՈ.—Մեկ-մեկ պատահում ա, վոր ֆանտան ա քցրած
ձաշից հետոները:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—(Յույց տալով նրա գրպանի փեր) Պորկի՞վ ես փա-
կում բերանը:

ՊԱՆ ՍԱՔՈ.—(Հանում է փեր) Թըղոցով: (Խմում է): Իսկ պոր-
կեն կարող եմ կոտորատիվին նվիրել: (Մեկնում է) Տուր
վարչության, ապրանքի սորտիմենտը շատացնեն:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—(Ցեռ նրելով նրա ձեռքը) Մեզ պետքական ապրանք
չի, տար դուքանչուն: Ասում են ծախելու բան չունի: Հին
բարեկամիդ հավարին հասի:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—(եցանք խփում ե ռեք բերանք) Ինձ հարկավոր
կգա: (Շիւր գրպանն է դնում) Յանկանում եմ, վոր մկներէ
հետ լավ կռիւլ տառ, Ոհան բիձա:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Մկներին սավետական կատուն ահակում: Տեսնում
ես: (Յույց է ցալիս նրացանք, առնելով ձեռքը) Հինգհարվա-
ժանի ա:

ՊԻԱՆ ՍԱՔՈ.—Մկան ցեղին չեմ պատկանում, Ոհան բիձա: Հրա-
ցանով մի վախացնի: (Հեռանում է, օրորվելով յեւ յերգելով):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Անան բիձու տունը. Աղբաս կոնվուպուրյուն: Պատից կախված է հրա-
ցան յեւ զինվարական շինել: Դիմաց—բաց լուսամուտ, աջ կողմ—
դուռ, ներեկո յե:

Տ Ե Ս Ի Լ 1

ՄԱՐՈՆ. լուսամուտի մոտ նստած, կար է անում: ՈՀԱՆ ԲԻԶԱՆ մյուս
լուսամուտի մոտ, իւրեւնիկն նստած, լրագիր է կարդում: Սեղանի
վրա թելի պարագաներ:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Մարո, լսի նորութիւն կարդամ (Կարդում է դառ-
դաղ, կարկամելով) «Յերկաթուղու կայարանում ձերբակալ-
ված է «Կարմիր Հովտեմբեր» մեխանիկական գործարանի
գանձապահ քաղաքացի Թուլարյանը, վորի մոտ հայտնաբեր-
ված է հինգ հազար ռուբլի գործարանային դրամ: Նա, յու-
րացնելով դրամը, կամեցել է թաղնովել: (Լրագիրը դնում է
ծնկանք) Վո՛նց ա... Ինչքա՛ն փող ա չե՛... (Տարուբերում է
գլուխը) Մեզ նմանների բուրդն են խուզում: Ըսկի կարողա-
նում ես վրահասու ըլնե՛ր: (Դառնում է Մարոյին) Ի՞նչ կա-
սես սրան, Մարո:

ՄԱՐՈ.—Ի՞նչ: (Առանց հասկանալու նայում է նորը):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Լսեցի՞ր, նորութիւն կարդացի:

ՄԱՐՈ.—Ի՞նչ նորութիւն:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Նոր կարդացի: Կաղեթումն ա գրած:

ՄԱՐՈ.—Չլսեցի:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Ի՞նչ ա պատահել քեզ:

ՄԱՐՈ.—Չեմ իմանում: (Կախ է գցում գլուխը):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Վերջին ժամանակները մտածկոտ ես դառել: Դժբա-
ղուն ես, ինչ ա: Ասա:

ՄԱՐՈ.—Վոչինչ: Հենց ենպես. զանազան մտքեր եմ անում:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Յես ել եզ եմ ասում: Ի՞նչ մտքեր ես անում: Թե

մի վատ բան կա, հորիցդ ծածուկ մի պահի: Խորհուրդ կտամ:
ՄԱՐՈ.— Յես վոյինչ չեմ ծածկում:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— Դրո՞ւստ: Ինձ չես կարա խաբել. իմ աչքը բանա-
կալինի աչք ա: Հարուր վերստի վրա ճանճը տեսնում եմ:

ՄԱՐՈ.— Ի՞նչ ես կպել ինձանից: Ասում եմ չեմ ծածկում:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— Քու բանն ա: Մեծ աղջիկ ես, ինքդ քու գլխի
տերը: Բայց քո մեջ մեծ փոփոխություն եմ տեսնում:

ՄԱՐՈ.— Վոչ մի փոփոխություն չկա:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— Ձե, կա: Շատ ես լաց քընում: Աչքերդ շարունակ
կարմրած են և ուռած: Առաջ ուրախ ելիր, թովոան, հիմի
կասես պառաված կնիկ քընես: Մանասը դրուստ ա ասում:

ՄԱՐՈ.— Վոչվոք չի խնդրում նրան, վոք լրտեսություն անի ինձ:
Իմ գործերը նբան չեն վերաբերում:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— Բարկացկոտ ել ես դարձել: Լավ չի:

ՄԱՐՈ.— (Տառապանով) Դե հերիք ելավ քեզրես ինձ: Չահլա
գնաց:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— Դե լավ, սուս եմ անում: Սամավարը շահտ կըլնի:

ՄԱՐՈ.— Քցած ա:

Տ Ե Ս Ի Լ 2.

Մտնում է ՄԱՆԱՍԸ

ՄԱՆԱՍ.— Բարե, Ոհան բիձա: (Մարոյին՝ յերկոցուրյամբ) Բարե
Մարո:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— Բարով ես եկել, Մանաս: Եդ թնչ ես եղպես զար-
դարվել. նոր բլուզ ես հագել: (Հոսոսում է) Ես թնչ հոս
ա զալիս քեզանից:

ՄԱՐՈ.— (Մաղբախան) Դու խի յա ցանել: Պսակվելու աղջկա նման:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— (Մարոյին, սասեղով) Լեզուդ քաշի: (Մանասին)
Նստի, բարեկամ: Հրմի սամավարը կհասնի:

ՄԱՆԱՍ.— (Նստում է) Որինական ասած, թեյ խմել եմ:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— Մեկ ել կխմես: Չալը գինի չի, փաս չի տա: Ու-
զճւմ ես շաշլի խաղանք: Համաձայն ես:

ՄԱՆԱՍ.— Խաղանք:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— Մարո, սամավարին մտիկ տուր: (Դարտի վրա-
յից վերցնում է շաշլան ու թախակը, դնում իոսնուկի վրա,
լուսամուտի մոտ): Առաջ արի, կարմիր կուպեց: (Մարոն
դուրս է գնում: Մանասը հայացով ուղեկցում է նրան): Վո-
րճիկ ես խաղում. սեճիկ, թե սխալտակով:

Տ Ե Ս Ի Լ 3.

ՄԱՆԱՍ.— Միենույն ե:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— Սկսում ենք: (Թխկթխկացնում է շաշլայի փուլով)
Յես գնացի: Ետը թնչ ես արել:

ՄԱՆԱՍ.— Ասավոտյան կարտոֆիլը փռեցի չորանա: (Փուլը ա-
ռառ է մղում):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— (Առաջ է մղում փուլը) Կաղեթում գրում են, վոք
կասիրը ուղեցել ա փողերը առնի փախչի:

Տ Ե Ս Ի Լ 4.

Մտնում է ՄԱՐՈՆ և գնում իր տեղը: ՄԱՆԱՍԸ հայացով
ուղեկցում է նրան:

ՄԱՐՈ.— Ձի յեռացել (վերցնում է կարը):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— (Մանասին) Ընչի՞ չես խաղում:

ՄԱՆԱՍ.— (Գլուխը քափահալելով. ցրված) Իսկույն: (Հայացք
հեռացնում է Մարոյից, առաջ է մղում փուլը):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— Ուղեցել ա տասը հազար տանի: Գնա: (Փուլով խը-
փում է իոսնուկին):

ՄԱՆԱՍ.— (Հայացքը Մարոյին, առանց շաշլայի թախակին նայե-
լու) Գնում եմ: (Գնում է փուլը):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— Ի՞նչ ես քու քարը իմի վրա դնում: Վոք որեւ-
քում ա եղպես բան գրած:

ՄԱՆԱՍ.— (Ցեւ վերցնելով փուլը) Սխալվեցի:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— (Նայելով թախակին) Աղբա... Հասկանում ենք
ձեր ոյինները: Իսկ յեթե չես այսպես... Ձե, եղպես չի կա-
րել... (Մտնում է, թախակին նայելով):

ՄԱՆԱՍ.— Գնանք կինո, Մարո:

ՄԱՐՈ.— (Գլուխը կարի վրայից չբաժնացնելով, կամացուկ) Ձե:

ՄԱՆԱՍ.— Որինական ասած, ասում են հետաքրքիր նկար է:

ՄԱՐՈ.— Ժամանակ չունեմ: Կար ունեմ անելու:

ՄԱՆԱՍ.— Լի որերին են աշխատում: Տոն որը հանդատանում են:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— (Շարժելով փուլը) Դե գնա:

ՄԱՆԱՍ.— (Ցրված) Իսկույն: (վերցնում է փուլը յեվ ձեռքին պա-
հելով, դառնում է Մարոյին) Նկարի մասին լրագրում գըր-
ված էր: Շատ են գովում:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.— Խաղա չե...

ՄԱՆԱՍ.— Խաղում եմ: (Գնում է փուլը: Մարոյին) Որինական ա-

ոած, սխալին կնայելինք:

ՄԱՐՈ.—Չեմ գնա:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—(Տարածելով ձեռքերը) Ելի քարի վրա...

ՄԱՆԱՍ.—(Շփոթված) Չնկատեցի: (Փայլը սեղափոխում է):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Կույրը, ասում են, շաշկա չի խաղում: (Փողոցից լսվում է յերգի ու նվագի ձայն: Ոհան բիձեն լուսամուտից նայում է դուրս) Պիան Սաքոն Լալագարի հետ քեֆ են առնում:

ՄԱՐՈ.—Ո՛ւր ե: (Վեր է բռնում սեղից, գեմ նետելով կարը, ու կախվում լուսամուտից):

ՄԱՆԱՍ.—(Վեր է կենում, ձեռքը քափահաբերով, նայում է Մարոյին) Տուն գնալու ժամանակ ե: (Բարձրաձայն հառաչում է):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Բա շաշկեն: (Չարմանալով նայում է Մանասին):

ՄԱՆԱՍ.—Անձնատուր եմ լինում: (Չղային հագում է) Տարվեցի: (Նայում է Մարոյին):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Նստի: Չայ խմենք: Մարո, մերդ մեր ա: Սաժա՜վաբը շո՜ւտ կըլնի:

ՄԱՐՈ.—(Չայն է տալիս լուսամուտից դուրս) Կգամ: Անպատճառ կգամ: (Հեռանում է լուսամուտից, վերցնում է կարը):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—(Մարոյին) Ո՛ւր հետ ելիր խոսում: (Նայում է լուսամուտից) Լալագարի: (Տարտբերում է գլուխը):

ՄԱՐՈ.—Ի՞նչ բանն ա ում հետ:

ՄԱՆԱՍ.—Ցտեսություն:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Ախր ձեզ ի՞նչ ա պատահել: Մեկը մոռացնում ա կառվի նման, մեկերը հենց նոր եկավ, իսկույն փախչում ա: (Մանասին) Մնա, ասում եմ, չայ կխմենք:

ՄԱՆԱՍ.—(Խուլ ձայնով) Ներողություն, Ոհան բիձա: Որինական ասած, չայի արամազություն չկա: (Ծածկում է գլխարկը):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Ընչի՞ եղպես:

ՄԱՆԱՍ.—Գործ ունեմ:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Տոն որը ի՞նչ գործ: Դու չեյի՞ր ասում, վոր տոն որը պըտի հանգստանալ:

ՏԵՍԻԼ 5.

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—(Ներս է գալիս՝ ձեռքին կովկիթ) Կովը ելի կաթը պահասացրել ա: Իրիկվան դժար հերիք անի: (Կովկիթը դնում է հասակին: Մանասին) Ո՛ւր, Մանաս:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Ասում ա գործ ունեմ:

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—Գործ միշտ ել կա: Մարո, դոնադին չայի համեցեք արա:

ՄԱՐՈ.—(Առանց նայելու) Թող մնա, ափսոս չեմ գալիս:

ՄԱՆԱՍ.—Չեմ ուզում, Շողեր բաշի, խմել եմ: Ուզում եմ կիշա գնամ: Շուտով կսկսեն:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—(Շողեր բաջուն) Յես ել գնամ, հը: (Մանասին) Կտանես հետդ:

ՄԱՆԱՍ.—Ուրախությամբ: (Հոգոց է հանում):

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Գնանք: Մենք ել մի մարդ ենք: (Վեր է կենում, վերցնում է գլխարկը):

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—Չայի կգաս:

ՈՀԱՆ ԲԻԶԱ.—Յես շատ չեմ մնա: Մի երկու կտոր տեսնեմ, կգամ: Ոհան բիձեն յեվ Մանասը գնում են:

ՏԵՍԻԼ 6.

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—Աղջի, սաժավաբը բեր:

ՄԱՐՈ.—(Վեր է կենում) Իսկույն: (Գնում է):

ՏԵՍԻԼ 7.

Շողեր բաջին սեղանի վրա յե դնում մի կնուն, բերում է մաղը յեվ վերցնելով կովկիթը, սկսում է փամել կաթը:

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—Հարկավոր ա կովը փոխել, լավը առնել, բայց փող չկա: Պահասություն շատ կա: Մարոն վոտնաման չունի: Ինքս ել մի կարգին շոր չունեմ: Մարազն ել ընտեղա փուլ եկել: Անվոտ գեղացու տնտեսությունն ի՞նչ պըտի ըլնի: Լավ կըլնի տնփեսա ունենանք: Խելքը զլխին մի աշխատող: Մանասի նման: Լավ տղա յե: Վորը ա մեծացել, բայց մարդ ա դուրս եկել: Ինքն իրան պահել մեծացրել ա: Մնում է ՍԱՆԱՄ ԽԱՅԻՆԻ:

ՏԵՍԻԼ 8.

ՍԱՆԱՄ ԽԱՅԻՆԻ.—(Չոր) Բարով ձեզ: (Այք է ամուսն սեղյակում, ակնհայտի արհամարհանով):

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—Բարով ես եկել: Նստի, Սանամ խաթուն:

ՍԱՆԱՄ ԽԱՅԻՆԻ.—Նստելու ի՞նչ ունեմ, վոր նստեմ: Իշտոնուկից բացի, բան չկա: Մի երկու աթոռ ել ա առեք շաքրի համար:

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—Ի՞նչ աթոռի ժամանակ ա: Աթոռը հաց չի, չի ուտվի: Անջախ-անջախ գլուխ ենք պահում:

(Սանամ խաթունը նստում է):

ՍԱՆԱՄ ԽԱԹՈՒՆ.—Մարդդ կոռպերատիվումն ա, համա դուք աղքատ եք ապրում:

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—Գանգատավոր չեմ. սոված չենք մնում: Հրեն չաշ-շաքարը ստույի վրա:

ՍԱՆԱՄ ԽԱԹՈՒՆ.—(Նայում է շաքարամանի մեջ) Իրեք կտոր սաղ ընտանիքին: Իրեք կտորով չես մի ստաքան եմ խըմում:

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—Իրեք կտորը մեզ սաղ որը հերիք ա անում: **ՍԱՆԱՄ ԽԱԹՈՒՆ.**—Միս առնում եք:

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—Պատահում ա. առն որերին առնում ենք: Ես որ մսով բողբաշ եմ եփել:

ՍԱՆԱՄ ԽԱԹՈՒՆ.—Իսկ մենք մեք շներին ամեն որ միս ենք ուտացնում:

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—Դե մենք վոնց կարող ենք ձեզ հավասարվի: Դուք հարուստ եք, մենք աղքատ:

ՍԱՆԱՄ ԽԱԹՈՒՆ.—Բայց իշխանությունը հըմի ձերն ա: (Հառաչում է) Հոգիներս հանեց ձեր իշխանությունը նալոգ-ներով: Բայց աստված մեզ իրա վողորմությունից չի զըրկում: Անցյալ իրեքշաբթի մի ձի չեկ առանք:

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—Տեսել եմ: Լավ ձի յա:

ՍԱՆԱՄ ԽԱԹՈՒՆ.—Չորս հարուս մանեթ տվինք: (Հառաչում է, խոնջուրյամբ) Կոռպերատիվում չենք ծառայում, բայց աստված հասցնում ա: Շուտով տղիս պսակելու չեմ. հարուստ հարս ենք ուզում:

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—Ո՞ւմ եք նշանել:

ՍԱՆԱՄ ԽԱԹՈՒՆ.—Դրսեցի յա: (Լուում է) Եկել եմ զրա մասին քեզ հետ խոսալու:

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—Ինձ հետ: (Կողմ): Ի՞նչ է ասելու:

ՍԱՆԱՄ ԽԱԹՈՒՆ.—Դուք աղքատ եք, բայց ձեր հալովը չեք մնում, ուզում եք սուփրի վերի ծերը նստեք: Միայն թե ձեզ չի հաջողվի մեզ հետ հավասարվել:

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—(Անգիստ) Չեմ հասկանում ի՞նչ ես ասում:

ՍԱՆԱՄ ԽԱԹՈՒՆ.—(Բարձրաձայն է ասելից, հագուստի փափուկ բռնած) Մի նեղացի, եկել եյի ասեմ, ինչ վոր ասեցի:

(Նստում է) Թույլ չենք տա, Շողեր բաջի, եղպես ել իմացի: **ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.**—Ի՞նչը թույլ չեք տա, Սանամ խաթուն:

ՍԱՆԱՄ ԽԱԹՈՒՆ.—(Վոսփի յե յելնում. կոսրսվում է, մեղմորով զանազան խոսքերով անելով) Մի գլուխ վազում կախվում ա իմ Լալազարի վզից: Պոկ չի գալի: Ուր գնում ա, հետևից վազ ա տալի: Ամեն տեսակ ֆանդ ու ֆել ա-նըմ ա, Լալազարիս իրա ճանգը գցի:

ՇՈՂԵՐ ԲԱԶԻ.—Ո՞վ: Ո՞ւմ մասին ես ասում:

